գլխաւորին՝ Նազարէթին և «այլոց վերա-
կացուաց աշխարհականաց», որոնք զինքն
վերստին կոչած էին Կ. Պոլիս, և անոնց
դրդումներով, կը սկսի աւելի նեղել պան-
դուխտ քահանաները։ Եթէ քահանայ մը
ընթերցման սխալ ընէր, հրապարակաւ կը
խայտառակէր (Դարանաղցի, էջ 124)։

Քահանաները երեք աստիճան (տասն
կարմիր, տասը ղրչ. և հինգ ղրչ.) տուրքի
կ'ենթարկէ, տարուան մէջ երեք անգամ
վճարելու պայմանով։ Քահանաները վեր-
ջին ծայր անձկութեան և տագնապի կը
մատնուին, և ինքզինքնին տղատել կը
խորհին։ Գաղթականներէն դիրքի տէր
մարդիկ ծածուկ կը դիմեն Ռամատան ա-
նունով Պալթաճիլար Քէհեասիին, որ Կա-
մախի Մարէք գիւղէն ազդեցիկ արքունի
պաշտօնեայ մըն էր, ու դրամի ուժով ա-
նոր միջոցաւ Սուլթան Ահմէտէն հրովար-
տակ մը կը հանեն Դարանաղցիի անունով,
որով անոր իրաւասութիւն կը տրուէր իր
հեղինակութեան ենթարկելու Էրզրումի
էյալէթէն՝ այսինքն գրեթէ բովանդակ Հա-
յաստանէն գաղթողները և զանոնք ինք-
նագլուխ հովուելու (Դարանաղ. էջ 128–129)։

Գրիգոր Կեսարացի այսպէս պատճառ
կ'ըլլայ որ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը
1607ին երկուքի բաժնուի. վասնզի Դա-